# ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

(Նմանություն Նեկրասովի)

---

Քնի՛ր, դու մա՛նուկ, անմեղ տակաւին,
Քնի՛ր դու անդորր,
Խաւարը տիրեց նիրհող աշխարհին,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։
Ես քեզ չեմ պատմի անուշ հէքեաթներ,
Այլ ճշմարտութիւն.
Իսկ դու քո՛ւն եղիր, քո սեւուկ աչքեր
Խո՛ւփ արա, նախշուն։

---

Քո հարազատ մօր երգը չէ հնչում
Օրորոցիդ քով,
Դայեակն է, աւա՜ղ, քեզ նանիկ կանչում
Իր օտար հոգով։
Խորթ է քեզ համար մայրենի երգը,
Տխո՜ւր, սգաւոր.
Քո՛ւն եղիր, հոգիս, խո՜ր է այդ վէրքը,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։

---

Հեռո՜ւ երկիրներ քո հայրը գաղթեց
Գիւղից հայրենի,
Եւ նենգ միջոցով շատ փող վաստակեց՝
Դարձաւ անուանի։

Իր պերճ պալատում փարթամ, երջանիկ
Ապրում է այսօր.
Նա էլ չէ յիշում ազգ ու հայրենիք,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։

—

Դու կը մեծանաս անհոգ եւ անվիշտ
Կեանքի մէջ փափուկ,
Եւ Ճրանսուհու կրթութեան ընդմիշտ
Կը մնաս սրուկ։
Դու չես թոթովի մայրենի լեզուով
Քեզ անկարեւոր,—
Քնի՛ր, խե՛ղճ մանուկ, քնի՛ր անխռով,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։

—

Հօրդ մահից յետ կը լինես ժառանգ
Դու օրինական,
Իսկոյն կ'սկսես վարել մի գեղխ կեանք՝
Ի՛սկ անասնական...
Ու կ'անհետանա՜յ քո հօր վաստակած
Ոսկին թունաւոր...
Քնի՛ր, հա՛յ մանուկ, ընդմիշտ խորթացած,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։

—

Աշխարհից աշխարհ միշտ կը թափառես
Ունայն ու անմիտ,
Եւ պարծենալով դու քեզ կ'անուանես
Հայ կոմսպոլիտ...
Ա՛յդպէս դու կ'անցնես անօգուտ, դարդակ
Քո կեանքը բոլոր,
Եւ մահ կը գտնես օտար երկնի տակ,
Քեզ օրո՜ր, օրո՜ր։

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ